
ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ 300-ԱՄՅԱ ՀՈՒՆՆԵՐԻ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆ

2012-ին լրանում է Մայաթ-Նովայի (1712–1795) ծննդյան 300-ամյակը, որի կապակցությամբ ստեղծվել է պետական հոբելյանական հանձնաժողով՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ: Հոբելյանական միջոցառումների շարքում 2012 թ. հունիսի 21-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան, որի աշխատանքների ընթացքում ԳԱԱ արվեստի, Մ. Աբելյանի անվան գրականության, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գիտնականների ղեկուցումներում ներկայացվեց մեծ քանակությամբ գրական ու երաժշտական ժառանգությունը:

Բացման խոսքով հանդես եկավ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը՝ նշելով, որ դեռևս 1913–14 թթ. Թիֆլիսում Հայ գրողների կովկասյան ընկերությունը Հովհ. Թումանյանի գլխավորությամբ կազմակերպեց մի շարք ցերեկույթներ, երեկոներ, ժողովներ և նիստեր, որոնց շնորհիվ մոռացությունից հանվեցին Մայաթ-Նովայի անունն ու ստեղծագործությունները՝ մեծ հետաքրքրություն առաջացնելով հայ և վրաց մտավորականության շրջաններում, Մայաթ-Նովայի բերելով հիրավի համաժողովրդական, համահայկական, համակովկասյան լայն ճանաչում: «Հենց այդ ժամանակ էր, որ վերջապես սպառվեց դեռ 1852-ին Գ. Ախվերդյանի՝ փոքր տպաքանակով հրատարակած Մայաթ-Նովայի բանաստեղծությունների գիրքը: Դրան հետևեցին Մայաթ-Նովայի հայերեն, ապա՝ վրացերեն խաղերի ավելի մեծաքանակ հրատարակություններ: Հրատարակվեցին Մայաթ-Նովայի մասին Հ. Թումանյանի և Ն. Աղբալյանի էլոյթներն ու հոդվածները, իսկ 1914-ի մայիսի 15-ին մեծ հանդիսավորությամբ բացվեց Մայաթ-Նովայի մարմարե մահարձանը, որի նախաձեռնման և իրականացման աշխատանքներին գործուն մասնակցություն ունեցավ Գ. Բաշինջաղյանը: Այդ օրվանից սկիզբ դրվեց Վարդատոնի ամենամյա գեղեցիկ ավանդույթին, որ շարունակվում է մինչ օրս: 1963-ին մեծ շուքով նշվեց Մայաթ-Նովայի ծննդյան 250-ամյա հոբելյանը: Երևանում և Սոսկվայում տեղի ունեցան հանդիսավոր նիստեր, ստեղծվեցին Մայաթ-Նովայի կերպարով ու արվեստով ներշնչված երաժշտական, բանաստեղծական, նկարչական գործեր, կինոժապավեններ, այդ թվում՝ Հրայր Ռուխկյանի դիմանկարները: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դիմաց տեղադրվեց Արա Հարությունյանի կերտած նշանավոր հուշաղբյուր-հուշարձանը՝ բանաստեղծի գլխաքանդակով: Իսկ Մ. Փարազանովի «Նոան գույնը» ֆիլմը դիտելուց հետո հոչակա-

վոր ռեժիսոր Տոնինո Գուեռան գրեց իր նշանավոր «Մայաթ-Նովա» բանաստեղծությունը, որը թարգմանվեց մի շարք լեզուներով և ռուսերեն տպագրվեց 1960-ականների վերջին «Բնոստրաննայա լիտերատուրա» հանդեսում: Անցավ ևս հիսուն տարի: Այսօրվա մեր նստաշրջանն էլ մեր սիրո և հարգանքի տուրքն է հանձարեղ բանաստեղծին ու երաժշտին»:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեցին ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր Շահեն Շահինյանը:

ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը իր զեկուցման մեջ ներկայացրեց XX դարավերջի անգլիացի նշանավոր հայագետ Չարլզ Դաուսեթի «Մայաթ-Նովա» ծավալուն ուսումնասիրությունը (1997): Բարեխղճորեն անդրադառնալով սայաթնովագիտության ընթացքին՝ Դաուսեթը եզրակացնում է, որ Մայաթ-Նովան աշխարհի հանձարեղ բանաստեղծներից է, ցավոք՝ անհայտ շատերին: Պատմահամեմատական մեթոդով գրված աշխատության մեջ Մայաթ-Նովայի խաղերը համեմատվում են աշխարհի նշանավոր բանաստեղծների գործերի հետ՝ սկսած Հոմերոսից մինչև մեր օրերը: Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը հանդես եկավ «Մայաթ-Նովայի երգերի երաժշտագեղագիտական հիմքերը» թեմայով զեկուցմամբ:

«Խաղերում» գործածված որոշ բառերի (օրինակ՝ սուք, գեթ և այլն) բնագրային-իմաստային ճշգրտմանը, հեղինակի գործածած իմաստով հասկանալու հարցին էր նվիրված Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի «Բառաքննական ճշգրտումներ Մայաթ-Նովայի հայերեն խաղերի մի քանի բառի վերաբերյալ» զեկուցումը: Բանախոսի կարծիքով՝ «սուք պետք է հասկանալ շուք (շքեղ) (ոչ թե սուք «տխրություն, սուգ»), գեթ (գայթ. հմտ հայթել. «շեղվել, սայթաքել») սայթ-աքել և այլն»: ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սուրադյանը «Մայաթ-Նովայի սիրերգությունը գրական ազգակցության համատեքստում» զեկուցման մեջ Մայաթ-Նովային ներկայացրեց որպես Աստվածաշնչի և սուրբգրական մեկնությունների, միջնադարի հայ քնարերգության լավագույն ավանդների շարունակություն, ով խոր ազդեցություն է թողել հայ քնարերգության զարգացման հետագա ընթացքի վրա: Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Օրդոյանը «Գրիգոր Շարբաբյանի «Խալխի նոքար» պիեսի բեմադրությունը թիֆլիսահայ բեմում» զեկուցման մեջ անդրադարձավ 1929-ին Թիֆլիսի Հայպետդրամայում բեմադրված Գրիգոր Շարբաբյանի «Խալխի նոքար Մայաթ-Նովա» պիեսին, որը նշանակալի երևույթ էր դարձել և մեծ ոգևորություն առաջացրել հանդիսականների շրջանում թե՛ դրամատուրգիական արտասովոր կառուցվածքով,

թե՛ ռեժիսորական լուծումների ընդգծված թատերայնությամբ: Արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը «Մայաթ-Նովա՝ «Քանի վուր ջանի իս» – Ա. Բաբաջանյան՝ «Էլեգիա»» զեկուցման մեջ ներկայացրեց հայկական դաշնամուրային տրանսկրիպցիաների կայացման ու զարգացման գործում իր կարևոր տեղն ունեցած՝ Ա. Բաբաջանյանի նշանավոր դաշնամուրային «Էլեգիան» (1978), որը հեղինակը նվիրեց Արամ Խաչատրյանի հիշատակին և որտեղ օգտագործեց Մայաթ-Նովայի «Քանի վուր ջան իս» երգի մեղեդին: ««Էլեգիան» հարգանքի տուրք է Ա. Խաչատրյանին, – խոստովանել է կոմպոզիտորը, – որտեղ ես ու Մայաթ-Նովան հանդես ենք գալիս միասին: Ինձ համար անսահման թանկ այս ստեղծագործությունն արտահայտում է Արամ Խաչատրյանի հանդեպ իմ նվիրական զգացմունքները»:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավիկ Բսահակյանը «Մայաթ-Նովան Ավետիք Բսահակյանի ներաշխարհում» բանախոսությամբ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Ավ. Բսահակյանի «Մայաթ-Նովա, Մայաթ-Նովա, դուն չես մեռեր, Մայաթ-Նովա» բանաստեղծությունը (1899) և «Անմահ Մայաթ-Նովա» էսսեն (1945): Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանի «Մայաթ-Նովան և Սերգեյ Փարաջանովը» զեկուցումը խարսխված էր երկու արվեստագետների ստեղծագործական ճակատագրերի, ստեղծագործական ինքնատիպության համադրման սկզբունքի վրա: Համադրման գաղափարի հիմքում նրանց ծննդյան և ստեղծագործական կայացման հանգամանքն է. «նրանք երկուսն էլ հանճարներն են միևնույն քաղաքի՝ Բագմազ Թիֆլիսի, որի մշակութային միջավայրն էլ ձևավորեց նրանց հոգեկերտվածքը»: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆուլկորագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Ալինա Փահլևանյանը «Մայաթ-Նովան հայ երաժշտագիտության մեջ» զեկուցման մեջ անդրադարձավ Մայաթ-Նովա մեծ բանաստեղծ-երգահանի արվեստին նվիրված երաժշտագիտական ուսումնասիրություններին, որոնց սկիզբը դրվեց 1946-ին Մ. Աղայանի և Շ. Տալյանի կազմած աշուղի երգերի ժողովածուի հրատարակմամբ: Մայաթ-Նովայի արվեստին նվիրված մեծ և փոքր հրապարակումներից զեկուցողն առանձնացրեց երաժշտագետ-կոմպոզիտոր Մուշեղ Աղայանի, հայ խոշոր երաժշտագետ Քրիստափոր Քուշնարյանի և միջնադարագետ Նիկողոս Թահմիզյանի աշխատությունները: Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Անահիտ Զթյանը ներկայացրեց «Արաքսի Օհանյանի «Մայաթ-Նովա» օպերետը եգիպտահայ բեմում» զեկուցումը: Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա Հովհաննիսյանը «Մայաթ-Նովան Թումանյանի կյանքում» բանախոսության մեջ բանասիրական հանգամանակից վերլուծությամբ և նորահայտ փաստերով անդրադարձավ Թումանյանի պոեզիայում Մայաթ-Նովայի սիրերգության ազդեցություններին, աշուղ - բանաստեղծի ժողովրդականացման ուղղությամբ

նրա ծավալած գործունեությանը և սայաթնովագիտության ասպարեզում Թումանյանի շուրջ երկու տասնյակի հասնող հոդվածների, էլույթների և ուսումնասիրությունների նշանակությանը:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դերիկյանի «Սայաթ-Նովա. Մշո Սուրբ Կարապետի ուխտավորը» զեկուցումը նվիրված էր «Մշո Սուլթան Սուրբ Կարապետ» սկզբածքով բանաստեղծությանը, որն էլ ցույց է տալիս Սայաթ-Նովայի՝ հայ միջնադարյան մշակույթի և Մ. Կարապետի մասին եղած միջնադարյան մեկնությունների և ժողովրդական ավանդությունների քաջիմացությունը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր Միխայիլ Կոկժանը «Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան» զեկուցման մեջ անդրադարձավ Հակոբ Խանջյանի լիբրետոյի հիման վրա ստեղծված օպերային, որը Երևանի օպերային թատրոնում բեմ բարձրացավ 1969-ի մայիսի 13-ին և 15-ին: Օպերայում կոմպոզիտորը լայթթեմաների տեսքով օգտագործել է Սայաթ-Նովայի ինքնաստեղծ մեղեդիները: «Դուն էն գլխեն» երգի մեղեդին, նախերգանքից սկսած, հնչում է որպես հիմնական թեմա ողջ օպերայի ընթացքում: Դրամատուրգիական կարևոր դեր են կատարում «Քամանչա», «Աշխարհըս մե փանջարա է», «Բլբուլի հիդ լաց իս էլի», «Քանի վուր ջան իս» երգերը: ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անահիտ Բաղդասարյանը «Սայաթ-Նովայի երգերի երաժշտատեսական համալիր վերլուծության փորձ «Քամանչա» երգի օրինակով» բանախոսության մեջ բացահայտեց «Քամանչա» երգի բանաստեղծական և տաղաչափական հատկանիշները: Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Նազիկ Հովհաննիսյանը «Սայաթ-Նովայի հայերեն խաղերի հնչյունական առանձնահատկությունները» բանախոսության մեջ համակարգային տեսքի բերելով Սայաթ-Նովայի հայերեն խաղերին նվիրված աշխատություններում քննվող հնչյունական իրողությունները՝ ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, երկրաբառներ, դրանց հնչյունափոխությունը, համեմատեց Թիֆլիսի բարբառում գործառող և արևմտահայ ու արևելահայ տարածքների հայ բարբառներին բնորոշ իրողությունները: Լեզվաբանի կարծիքով՝ «լեզվական այս ոլորտով խաղերի լեզուն հարազատ էր ժամանակի Թիֆլիսի բարբառին: Վերջինս էլ արևելահայերեն և արևմտահայերեն բարբառների յուրօրինակ մի խառնուրդ էր»:

Ամփոփելով գիտական նստաշրջանի արդյունքները՝ Աննա Ասատրյանը կարևորեց զեկուցումների բովանդակությունը, նշելով, որ բանախոսները տարբեր տեսանկյուններից ներկայացրեցին Սայաթ-Նովայի գրական ու երաժշտական ժառանգությունը: